

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ**ԿԱՂՐՆՏԷՄ¹****I**

Կաղընտէս է, մեր կաղընտէս,
 Համատարած ձիւնն իր ճերմակ
 Ծածկոյթով՝ զերդ կակուղ վերմակ՝
 Քաղաքն ամբողջ ծածկեր է, տե՛ս:
 Օճախէն վեր, բուխերիկէն²
 Ծոյլ ծուխն իր գորշ քուրաներով
 Կը բարձրանայ՝ երբ չկայ հով,
 Կեանքի՛ նըշան ծուխն ապաքէն:
 Բուխերիկէն հարթ տանիքին՝
 Տոպրակ, շողգամ³ կախեցէք վար
 Տըղա՛ք, հրճուի թող ձեր հոգին
 Նըւէրներով սիրայօժար,
 Կաղընտէ՛ս է, մեր կաղընտէս,
 Մանկական տօ՛ն մեծահանդէս:

II

Կաղընտէ՛ս է, մեր կաղընտէս,
 Հոս հայրենի երգիքին տակ,
 Ուր սիրտեր միշտ սիրով են տաք,
 Վայելքներ կան, հաճոյք պէսպէս:
 Օ՛ն, բոլորուինք ուրախ սիրտով
 Կաղանդի ճոխ սեղանին շուրջ,
 Պահ մը չըլլանք այնչափ շատ լուրջ,
 Խօսինք խնդանք շէն, անվրդով:
 Օրհնութիւնն, ա՛խ, հայրենի տան,
 Բարիքներն իր բազմատեսակ
 Թող անպակաս յաւէտ մընան
 Ու վայելեն ամէն հասակ:
 Կաղընտէ՛ս է, մեր կաղընտէս,
 Թող չի մընայ ո՛չ ոք անտէս:

III

Կաղընտէ՛ս է, սե՛ւ կաղընտէս,
 Այսօր երբ հայ օճախներուն
 Մէջ է մարեր կայծը ջեռուն,
 Կեանքն է սառեր մեռելի պէս,
 Ա՛խ, թող չորնան այն վատ ձեռքեր,
 Որ քանդեցին տունը Հայուն,
 Ու ծակեցին սիրտն ըզգայուն,
 Որ միշտ յոյսով կը բաբախէր:
 Ա՛խ, հայրենիք մ՛ամբողջ մոխիր,
 Ա՛խ, Յեղ մ՛ողջոյն արիւնլըւայ,
 Սե՛ւ տարիներ համակ ոճիր,
 Աննախընթաց մեծ Գողգոթայ,
 Կաղընտէսն այս սե՛ւ կաղընտէս,
 Ազգային մեծ սգահանդէս:

IV

Կաղընտէ՛ս է, Հա՛յ կաղընտէս,
 Ահա ծագեց մեծ Արշալոյս,
 Հայ Ամանոր համակ կեանք, յոյս,
 Ա՛լ խոստմնալից կը ժպտի մեզ:
 Հայորդիներ վըտարանդի,
 Հայ աղջիկնե՛ր, կոյսե՛ր շուշան,
 Ուխտի կ'երթան նոր Շաւարշան
 Դէպ ըստորոտն Արարատի:
 Անցան այլեւս բուքն ու բորան
 Հայաշխարհին սեպ սարերէն,
 Հողն հայրենի - նոր, սուրբ խորան-
 Օ՛ն, համբուրենք անկուշտօրէն:
 Կաղընտէս է, Հայ կաղընտէս,
 Ազատ Հայուն փառքի հանդէս:

1920 թ.

ԿԻԼԻԿԵՅԻ¹ Կաղանդ՝ Կիլիկեան բարբառով² Ծխան³ Վրան մեթալիք եւ ուրիշ դրամներ խօթելու համար